«ԲԱԼԵՆԻ» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Բալենի» Գյուղատնտեսական Բարեգործական Հիմնադրամը ստեղծվել է գյուղատնտեսության ոլորտում ներգրավված մի խումբ մասնագետների կողմից: Գյուղատնտեսության ոլորտում ավելի քան 20 տարի փորձառություն ունեցող մասնագետները միավորել են իրենց ներուժը, որպեսզի ձևավորվի մասնագիտական խորհրդատվություն իրականացնող մի կառույց, որը կարող է լիարժեք խորհրդատվություն տալ ՀՀ բոլոր մարզերում: «Բալենի» ԳԲՀ եզակի է իր մոտեցմամբ, քանի որ ագրոբիզնեսի ու գյուղարտադրության զարգացումը դիտարկում է գյուղաբնակ կանանց եվ տղամարդկանց հավասարաչափ ներգրավման միջոցով:

Baleni Foundation

balenifoundation

ՀՀ ք. Երևան, Ա. Խաչատրյան 13
+374 10 26 45 30
+374 94 26 45 30

BALENI
Foundation

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Խթանել խոցելի գյուղական համայնքների սոցիալտնտեսական զարգացումը, ապահովել նորարարական փորձիև հմտությունների փոխանցումը ի նպաստ համայնքների հզորացման:

ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Դառնալ գյուղատնտեսության առաջնային արտադրության և ագրո-բիզնեսի մեջ ներգրավված արտադրողների վստահելի գործընկեր ու խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպություն:

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Կանանց դերի բարձրացում ու ներգրավում գյուղ ոլորտի զարգացման բոլոր ծրագրերում:
- Առաջնային արտադրության խթանում՝ բարձրարժեք գյուղատնտեսության ներդրման միջոցով:
- Գյուղատնտեսական կայուն արժեշղթաների դերակատարների կարողությունների հզորացում ու նոր կապերի ստեղծում: Զարգացնել նոր ստեղծվող ու գոյություն ունեցող ՓՄՁ-ների,
- գյուղատնտեսական խմբերի, ասոցիացիաներիու կոոպերատիվների մրցակցային առավելությունները շուկայական շղթայում ու նպաստել գործունեության դիվերսիֆիկացմանը: Գյուղական բնակավայրերում կանանց զբաղվածության
- ապահովման ծրագրերի իրականացում՝ կանանց կոոպերատիվների ու արտադրական խմբերի միջոցով:
- Բնապահպանական և կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող ռիսկերի մեղմման ծրագրերի իրականացում:
- Համայնքային ենթակառուցվածքների վերականգնում, որը ուղիղ կարող է ազդել հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ու հողօգտագործման ծավալների ընդլայնման վրա:
- Գյուղատնտեսական մասնագիտական կրթության ու խորհրդատվության զարգացում:

ԻՆՉՈՒ՞ ԸՆՏՐԵԼ ԲԱԼԵՆԻՆ

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- Որակավորված մասնագիտական խորհրդատվություն
- Նորարարությունների ներդրում:
- Բնության հետ համահունչ գյուղ-արտադրության կազմակերպում:
- ՀՀ բոլոր մարզերում հաղորդակցության վստահելի կապեր:
- Թափանցիկ հարաբերություններ գործընկերների եվ շահառուների հետ: